ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» ապրիլի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Նորայր Աղամալյանը:

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.3):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1))՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. ապրիլի 12-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **Յասոն ՍՊԸ-ի** հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **ապրիլի 11-ը ներառյալ** վերոնշյալ համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ _____ Նորայր Աղամալյան

Անդամներ՝

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Արմինե Մարգարյան

Քարտուղար՝

_____ Գայանե Դադիվանյան